# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք,
գ. Լեռնապատ, 27 փողոց. 7/6 , Հեռ. հեռախոս
/032268781/ , Lernapat.Lori@mta.gov.am

N 43
*12 փետրվարի 2019թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն մարզպետ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33 հոդվածի 9-րդ կետով՝ Ձեզ ենք ներկայացնում Լեռնապատ համայնքի ղեկավարի N1-Ա, N2-Ա, N3-Ա, N4-Ա, N5-Ա որոշումները:

**V**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վարդանյան*
*032268781*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
, գ.Լեռնապատ,27փ. 7/6 հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 01-Ա

## ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատերեր՝ Արամայիս Աբգյանի, Նազիկ Մխիթարյանի, Լուսիկ Բաբայանի, Լարիսա Գևորգյանի և Ալբերտ Եղիազարյանի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի հայտերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Լեռնապատ համայնքի 11 փողոց 1 տնակ և 10 փողոց 14 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր՝ Արամայիս Աբգյանի, 38 փողոց 5ա հասցեում գործող անհատ ձեռնարկատեր՝ Նազիկ Մխիթարյանի, 20 փողոց 4 տուն հասցեում գործող անհատ ձեռնարկատեր՝ Լուսիկ Բաբայանի, 11 փողոց,1 տնակ հասցեում գործող անհատ ձեռնարկատեր՝ Լարիսա Արշակի Գևորգյանի և 27 փողոց, հասցեում գործող անհատ ձեռնարկատեր՝ Ալբերտ Վանոյի Եղիազարյանի հայտերը բավարարել և նրանց տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հրապարակել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2019թ.հունվարի 08
գ.Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

23 հունվարի 2019 թվականի թիվ 2-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-041-0132-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետերով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման 48 կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Լեռնապատի նախկին բնակիչ այժմ հանգուցյալ՝ Ավետիք Գևորգի Թամարյանին պատկանող, 06-041-0132-0001 ծածկագրի տակ գտնվող տնատիրությանը տրամադրել փոստային հասցե՝ գ. Լեռնապատ 3 փողոց 11 տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2019թ. հունվարի 23
գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

29 հունվարի 2019 թվականի թիվ 3-Ա

## ԳԵՎՈՐԳ ԹԱՄԱՐՅԱՆԻ 06-041-0132-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Գևորգ Ավետիքի Թամարյանի դիմումը, ժառանգության իրավունքի 25.01.2019թ. թիվ 219, 220 վկայագրերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի 4 կետով 2005թ.-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սեփականատիրոջ նույնականացման նպատակով 15.05.2003թ. վկայականում և Լեռնապատի գյուղապետարանի կողմից տրված քաղվածքում ավելացնել հայրանունը՝ Ավետիք Գևորգ Թամարյան(ծնվ. 28.02.1938թ.):
2. Վերականգնել Լեռնապատ համայնքի 06-041-0117-0001 ծածկագրի տակ գտնվող բնակելի կառուցապատման հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը և 0,0093 հա-ի նկատմամբ ճանաչել Գևորգ Ավետիքի Թամարյանի(ծնվ. 13.06.1969թ.) սեփականության իրավունքը:
3. Հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում սերվիտուտ:
4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ գ. Լեռնապատ 3 փողոց 11/1 տուն:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2019թ. հունվարի 29
գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

29 հունվարի 2019 թվականի թիվ 4-Ա

ԳԵՎՈՐԳ ԹԱՄԱՐՅԱՆԻ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Գևորգ Ավետիքի Թամարյանի դիմումը, «Գ. Վերիյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը և բնութագիրը, ժառանգության իրավունքի 25.01.2019թ. թիվ 219, 220 վկայագրերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ Հողային օրենսգրքի 60 և 64-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Լեռնապատ համայնքի 06-041-0132-0001 ծածկագրի տակ գտնվող բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը և 0,1992 հա-ի նկատմամբ ճանաչել Գևորգ Ավետիքի Թամարյանի(ծնվ. 13.06.1969թ.) սեփականության իրավունքը:
2. Լեռնապատ համայնքի 06-041-0132-0001 ծածկագրում, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա չգտնվող, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1961-1980թթ. կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ ճանաչել Գևորգ Ավետիքի Թամարյանի սեփականության իրավունքը՝ համաձայն հաստատված հատակագծի:
3. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ գ. Լեռնապատ 3 փողոց 11 տուն:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2019թ. հունվարի 29
գ. Լեռնապատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 05-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և առաջնորդվելով Լեռնապատ համայնքի ավագանու 2019թ.-ի 07 փետրվարի թիվ 2-Ն <<Լեռնապատ համայնքի ավագանու 2018թ.-ի դեկտեմբերի 18-ի <<Լեռնապատ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> 46-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> որոշմամբ՝

որոշում եմ.

1. Հաստատել Լեռնապատ համայնքի 2019թ.-ի բյուջեն՝ եկամտային և ելքային մասերի բաշխումը ըստ եռամսյակների:

2. Հաստատել համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկների 2019թ.-ի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսական դասակարգման հոդվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՁՅԱՆ

2019 թ.փետրվարի 07
գ.Լեռնապատ